# Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը բավարարում է լրագրողի բողոքը

Հունիս 30, 2011
Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը բավարարում է լրագրողի բողոքը
georgia.flag_.1.jpg [1]

Հունիսի 27-ին Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը բավարարեց «Օբյեկտիվի» մեդիա միավորման լրագրող Նինո Մակիաշվիլու բողոքը և համաձայնեց նրան տրամադրել պահանջված տեղեկատվությունը: Այս մասին հաղորդում է Վրաստանի երիտասարդ փաստաբանների ասոցիացիան, որն աջակցություն էր ցույց տալիս լրագրողին:

Մայիսի 27-ին Նինո Մակիաշվիլին Ներքին գործերի նախարարությանը դիմում էր ներկայացրել՝ պահանջելով հայտնել, թե որ ոստիկանական ստորաբաժանումներն են իրականացրել մայիսի 26-ի բողոքի ցույցի ցրումը: Նախարարությունը ոչ մի կերպ չէր արձագանքել: Լրագրողը դիմում էր ներկայացրել նախարարին: Հունիսի 27-ին տեղի ունեցած բանավոր լսումների ժամանակ նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ լրագրողը շուտով կստանա իրեն հետաքրքրող տվյալները:

**Աղբյուր:** Media.ge **[2]**

## Թեմատիկ նյութեր

Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն, ոչ թե իրավունքի սահմանափակում» [3]
2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները [4]
ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում [5]
Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ [6]
Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն [7]

**Source URL:** http://www.jnews.am/node/1363

**Links:**
[1] http://www.jnews.am/files/georgia.flag_.1.jpg
[2] http://www.media.ge/en/node/41632
[3] http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan
[4] http://www.jnews.am/jff-studies-2012
[5] http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award
[6] http://www.jnews.am/mane-asryan
[7] http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek